ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ն. Մ. ԴՐՈՒԺԻՆԻՆ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

Մեր երկրի գիտական հասարակայնությունը հանդիսավորությամբ նշեց բազմավաստակ պատմաբան, ականավոր հասարակական-քաղաքական գործիչ ու ջերմ հայրենասեր Նիկոլայ Միխայլովիչ Դրուժինինի ծննդյան հարյուրամյա հոբելյանը։

Սովետական Միության կենտրոնական մամուլն ու գիտական հանդեսները լայնորեն ներկայացրին խոշոր պատմաբանի հսկայական ներդրումը երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պատմության առավել բարդ ու կարևոր պրոբլեմների ուսումնասիրության գործում։

Դրուժինինի հետազոտությունների ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են գրեթե ողջ XIX դարը և XX դարի՝ մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի պատմության կարևորագույն խնդիրները։ Մեր պետությունն ու գիտական հասարակայնությունը շատ բարձր են գնահատում բազմավաստակ գիտնականի նշանակալի դերը։

Իր գործունեությունը Դրուժինինն սկսել է XX դարի սկզբին և շարունակում է ահա ավելի քան 80 տարի։ Բնորոշ է, որ 95-ամյա հասակում գիտնականն իր «Ռուսական գյուղը 1861—1880 թթ. բեկման տարիներին» աշխատության համար արժանացավ լենինյան մրցանակի։ Զափազանց լայն ծավալ ու խորություն են ունեցել գիտնական քաղաքացու, ռուսական երեք հեղափոխությունների և քաղաքացիական կռիվների մասնակից Նիկոլայ Դրուժինինի կյանքն ու գործը։

Ն. Մ. Դրուժինինը ծնվել է Կուրսկ քաղաքում, 1886 թ. հունվարի 1-ին (նոր տոմարով՝ 13-ին)։ Մոսկվայի 5-րդ գիմնազիան ավարտելուց հետո, 1904 թ. ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը։ Դեռևս գիմնազիայում սովորելիս հետաքրքրասեր ու ազատասեր պատանին հրապուրվում է հեղափոխական գաղափարներով, կարդում ընդհատակյա թեթթեր-թռուցիկներ, ապա և Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը։ Մեծ է լինում ռուս-ճապոնական պատերազմի թողած ծանր ու ճնշող տպավորությունը, առավել ևս՝ 1905 թ. «Արյունոտ կիրակիինը»։ Ուժեղացող ուսանողական շարժումներն իրենց հորձանուտի մեջ են քաշում նաև Դրուժինինին։ Նա գրում է. «Շուտով ես ընդունեցի իմ ծանոթ Ինեսա Ֆեոդորովնա Արմանդի առաջարկությունը՝ ինձ վրա վերցնել կուսակցության Մոսկվայի կոմիտեի գրադարանի ղեկավարությունը և Ն. Մ. Լուկինի հետ միջնորդ դարձա անլեգալ պրոպագանդիստական դրականության տարածման գործում» (տե՛ս Академик Н. М. Дружинин, Воспоминания и мысли историка, М., 1979, с. 12)։

1905 թ. փետրվարին Դրուժինինը բռնվում է Ի. Ֆ. Արմանդի բնակարանում՝ անլեգալ գրականության գրքերի ցուցակ տանելիս, բանտարկվում Բուտիրյան, ապա Տագանյան բանտերում ու աքսորվում Սարատով։ Այստեղ նա կապ է հաստատում ՌՍԴԲԿ Սարատովի կոմիտեի հետ և ակտիվորեն մասնակցում կազմակերպչական ու ագիտացիոն աշխատանքներին՝ բրոշյուրներ ու թռուցիկներ տարածելով բանվորների և նորակոչիկների շրջաններում։ Արդեն որպես հասուն մտավորական, նա ուշադրությամբ ու ոգևորությամբ հետևում էր հեղափոխական դեպքերի զարգացմանը և հանդես էր գալիս հակահեղափոխության, պատերազմի ու հրեական ջարդերի դեմ։ «Դրանք բախտավոր օրեր էին իմ կյանքում,— գրում է Դրուժինինը,— երբ ես զգում էի հե-

գափոխական խոսքի հզոր ուժը, երբ իմ աչքերի առաջ լսողների ամենահետամնաց շերտերի շրջանում զարթնում էր գիտակցությունը»։

Սարատովում Դրուժինինը նորից բանտարկվում է և ազատվում համառուսական ընդհանուր գործադուլից և ցարական մանիֆեստի հրապարակումից հետո։ Նա վերադառնում է Մոսկվա՝ շարունակելու ուսումը և կուսակցական աշխատանքը։ Դրուժինինը մասնակցում է հակաղումայական կամպանիային, սահմանադրական պատրանքների մերկացմանը և ՌՍԴԲԿ IV համագումարի նախապատրաստման աշխատանքներին։

1905—1907 թթ. հեղափոխությունը և դրանում ունեցած ակտիվ մասնակցությունը Դրուժինինին անդառնալիորեն կապեցին հայրենիքի բախտի հետ և կանխորոշեցին նրա կյանքի ու գիտական գործունեության ընթացքը։

Դրուժինինը ջանասիրությամբ ուսումնասիրում է հասարակական գիտությունները, լսում է իր ժամանակի նշանավոր պատմաբաններին, կարդում Կ. Մարքսի «Կապիտալը», հատուկ հետաքրքրությամբ մասնակցում համալսարանում կազմակերպված սեմինարներին, գրում ռեֆերատներ։ Նրա վրա մեծ ազդեցություն են թողնում այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ռ. Յու. Վիպպերը, Ս. Մ. Բոգոսլովսկին, Ա. Ն. Սավինը։ Արդեն ուսումնառության տարիներին արտահայտվեցին ապագա գիտնականի հետաքրքրությունների ուղղությունները՝ հեղափոխական շարժումների և ապա գյուղացիական պատմությունը։ Այդ են վկայում նրա առաջին ռեֆերատների թեմաները՝ «Հյուսիսային ընկերությունն ու Նիկիտա Մուրավյովի կոնստիտուցիան», «Պ. Դ. Կիսելյովը և նրա 1837—1838 թթ. ռեֆորմը»՝ պրոբլեմներ, որոնց հետագա ընդլայնումն ու խորացումը հնարավոր դարձրին մեծարժեք մենագրությունների ստեղծումն ու հրապարակումը։

Պետք է նշել, որ Դրուժինինը աշխատում էր բազմակողմանի ընկալել կյանքը և գիտությունը, հատուկ ուշադրությամբ ուսումնասիրում էր իրավունքի պատմությունը և հատկապես ռուս ժողովրդի իրավական վիճակը, այդ հարցի աղբյուրագիտական և պատմագիտական կողմերը։

1911 թ. Դրուժինինն ավարտում է համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, շարունակելով ուսումը պատմաբանասիրական ֆակուլտետում։

Երբ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը, Դրուժինինը, կտրված լինելով կուսակցական շրջաններից, չի կարողանում ճիշտ կողմնորոշվել և հակվում է դեպի «պաշտպանողականությունը», որին տուրք տվին II ինտերնացիոնալի ղեկավարները։ Շուտով նա զորակոչվում է և ուղարկվում կարճատև ռազմական կուրսեր, ապա պրապորշչիկի աստիճանով նշանակվում Մարիուպոլի հետևակային գնդի կրտսեր սպա։

Փետրվարյան հեղափոխությունն հենց առաջին օրերին Դրուժինինն ընտրվում է գնդի կոմիտեի նախագահ, ապա և բանվորների ու զինվորների Մարիուպոլի սովետի գործադիր կոմիտեի անդամ և նորաստեղծ քաղաքային վարչության նախագահի տեղակալ, իսկ օգոստոսին նշանակվում է կոմնիլովցինե-

րի դեմ ուղարկվելիք ռազմական զորամասի հրամանատար։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Մարիուպոլում ստեղծվում է «Հեղափոխական կազմակերպությունների քաղաքական կենտրոն», որի նախագահի տեղակալ է ընտրվում Ն. Դրուժինինը։

1918 թ. Նիկոլայ Միխայլովիչը վերադառնում է Մոսկվա, ավարտում ընդհատված պետական քննությունները ու պրոֆ. Մ. Մ. Բոգոսլովսկու առաջարկությամբ թողնվում համալսարանում՝ պրոֆեսորի պաշտոնի համար նախապատրաստվելու և առաջին հերթին՝ մագիստրոսի կոչում ստանալու համար։ Սակայն քաղաքացիական կռիվների սաստկացումը 1919 թ. ամռանը և Դենիկինի հարձակումը պատճառ դարձան նոր զորահավաքի, և Դրուժինինը նորից նվիրվում է ռազմաքաղաքական աշխատանքի։

1920-ական թթ. Դրուժինինը ծավալում է եռանդուն գործունեություն՝ դասախոսելով Կոստրոմայի համալսարանում և քաղլուս ցանցում, բանվորական ակումբներում, կատարելով գավառագիտական ու թանգարանային աշխատանքներ և ընդլայնելով պատմաբանի համար հույժ կարևոր բազմակողմանի դիտելիքների պաշարը։ Նրա դասախոսություններն ու սեմինարները մեծ հետաքրքրություն էին առաջացնում ուսանողության մեջ, նպաստում պատմության հանգուցային ու կարևոր խնդիրների նկատմամբ գիտական մոտեցում ձևավորելու գործին։ «Դրուժինինի բովանդակալից դասախոսությունները աչքի էին ընկնում փայլուն շարադրանքով, կենդանի խոսքով, փաստարկումների կոնկրետությամբ, հարուստ ու պատկերավոր լեզվով»,— նշում են նրա աշակերտները։

Ուսանելի են այն հետևողականությունն ու սկզբունքայնությունը, որ բնութագրում են գիտնականի գործունեությունը շուրջ ութ տասնամյակների ընթացքում։ Դեռևս ուսանողության տարիներին հրապուրվելով հեղափոխական անցքերի գնահատման և ուսումնասիրության հարցերով, Դրուժինինը մեկը դարձավ այն առաջիններից, ովքեր սկսեցին լրջորեն ուսումնասիրել ռուս ազնվականական հեղափոխականների պատմությունը (հաճախ այդ պրոբլեմին զուգընթաց անդրադառնալով XVII—XVIII դդ. գյուղացիական շարժումների, 1905—1907 թթ. հեղափոխության պատմության հարցերին)։ 1925 թ. «Беднота» թերթում տպագրվում է նրա «Ովքեր էին դեկաբրիստները» հոդվածը, քաղաքական աքսորյալների կազմակերպության հրատարակությամբ լույս է տեսնում «Ովքեր էին դեկաբրիստները և ինչի համար էին պայքարում նրանք» աշխատանքը։ Դրանց հետևում են «Տրուբեցկոյը որպես հուշագիր», «Տաժանակրություն և աքսոր» գործերը, գրախոսականներ «Դեկաբրիստները», ապա և «Դեկաբրիստները և նրանց ժամանակը» ժողովածուների մասին և, վերջապես, 1928 թ. «Նիկիտա Մուրավյովի կոնստիտուցիան» ուսումնասիրությունը, որը 1929 թ. ներկայացնում է և պաշտպանում որպես թեկնածուական դիսերտացիա։

Բայց այդ աշխատությունով ոչ թե ավարտվում, այլ սկսվում է անհատ դեկաբրիստների կյանքի ու գործունեության, ապա և ողջ շարժման համակողմանի ուսումնասիրությունը, որը հնարավոր է դարձնում ներկայացնել այդ բազմանշանակ շարժման ընդարձակ ու խոր արմատները, սոցիալական էությունը։ Այդ մեծ ու ընդհանրացնող աշխատության նախապատրաստմանն օգնում էին նրա «Պեստել», «Տրուբեցկոյ», «Յակուշկին», «Հյուսիսային ընկերություն», «Զեռնիշով» և մյուս հոդվածները, որոնց հաջորդեց 1933 թ. հրատարակված «Դեկաբրիստ Նիկիտա Մուրավյովը» գիրքը՝ այդ կարևոր ու դժվարին պրոբլեմի քննության մեծարժեք հանրագումարը, մի խոշոր գործ, որի հետ կապվում են Դրուժինինի բարձրացրած մյուս պրոբլեմները՝ ռուս հեղափոխական-դեմոկրատների ուսմունքները գյուղացիական համայնքի մասին, որոնք գիտականորեն հակադրված են ճորտատիրական-ազնվականական պատմագրությանը։ Այսպես, քննական հայացքով նա վերլուծում է դեկաբրիստական շարժման նախապատմությունը, դրա նշանակությունը և ապա հետագա արդյունքները և անառարկելի փաստերով ու համոզիչ եզրակացություններով

հանդես գալիս «Մ. Ն. Պոկրովսկու պատմական կոնցեպցիայի դեմ» կոլեկտիվ աշխատության հեղինակների կազմում։

1938 թ. Դրուժինինը հրավիրվում է ՍՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտ՝ մշտական աշխատանքի։ Այնտեղ նա մասնակցում է ՍՍՀՄ պատմությանը նվիրված նոր աշխատությունների ստեղծման գործին և միաժամանակ մշակում իր դոկտորական դիսերտացիան։

1944 թ., ավարտելով դեռևս 1920-ական թթ. սկսած ուսումնասիրությունը՝ «Պետական գյուղացիները և Պ. Դ. Կիսելյովի ռեֆորմը» թեմայով, Դրուժինինը պաշտպանության ներկայացրեց իր դոկտորական դիսերտացիան, որում հստակորեն ցույց է տրված ռուս գյուղացիների այդ մեծ զանգվածի (կազմում էր շուրջ 50 տոկոսը) տնտեսական և իրավական վիճակը, որը սկզբունքորեն չէր տարբերվում կալվածատիրական ճորտ գյուղացիների վիճակից, թեպետ վերջիններիս դրությունը շատ ավելի ծանր էր։ Հիշյալ ուսումնասիրությունը բարձր գնահատվեց և հեղինակին արժանացրեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի։ Երկու տարի հետո, երբ ավարտվեց կապիտալ աշխատանքի երկրորդ մասը, Դրուժինինն ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ և արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի (որի գումարը նվիրեց Հայրենական պատերազմում զոհվածների երեխաների համար ստեղծված մանկատանը)։

Նիկոլայ Միխայլովիչը բացառիկ արդյունավետությամբ ու մեծ նվիրումով է աշխատել ակադեմիայի պատմության ինստիտուտում, մասնակցելով այնպիսի խոշոր կոլեկտիվ գործերի ստեղծմանը (և՛ որպես հեղինակ, և՛ որպես խմբագրական կոլեգիայի անդամ ու խմբագիր), ինչպիսիք են՝ «Մոսկվայի պատմությունը» (6 հատոր), «ՍՍՀՄ պատմության ակնարկները», «ՍՍՀՄ պատմությունը», «Ռուսական կուլտուրայի պատմությունը», «Վավերագրեր. ՍՍՀՄ գյուղացիական շարժումները Ռուսաստանում XIX դարում և XX դարի սկզբում», մի ժողովածու, որը բազմակողմանիորեն բացահայտում է թե՛ գյուղի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը և թե՛ դասակարգային պայքարի պատմության փուլերը տվյալ պատմական ժամանակաշրջանում։ Աշխատանքի գիտական արդյունքների բարձր գնահատականի արտահայտությունը եղավ այն փաստը, որ 1953 թ. Ն. Մ. Դրուժինինն ընտրվեց ՍՍՀՄ ԳԱ իսկական անդամ։ Այդ ճանաչումը «չհանգստացրեց» իսկական գիտնականին, և նա նոր եռանդով շարունակում էր իր ուսումնասիրությունները։ Եվ ահա 1978 թ. հրապարակվեց նրա նոր մենագրությունը՝ «Ռուսական գյուղը 1861—1880 թվականների բեկման ժամանակաշրջանում»։ Այդ գրքում «տրված է երկրի գյուղացիական տնտեսության, արտադրողական ուժերի զարգացման, ապրանքաղրամային հարաբերությունների ծավալման, գյուղացիության քայքայման պրոցեսների խոր ու բազմակողմանի վերլուծությունը, դասակարգային պայքարի ձևերի փոփոխման և բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի ստեղծման նախապայմանների ձևավորումը» (տե՛ս «Коммунист» հանդեսը, 1986, № 1)։ Այս ծանրակշիռ հետազոտությունը մեծ նշանակություն ունի ռուսական գյուղի քայքայման ու նոր հասարակական հարաբերությունների ընթացքը հասկանալու տեսակետից, քանի որ «ժամանակավորապես պարտավորված» գյուղացիները, վճարելով իրենց «պարտքը» պետությանն ու կալվածատերերին, ձեռք էին բերում անձնական ազատություն և չունենալով բավարար չափով հող ու արտադրության միջոցներ՝ կանգնում էին պրոլետարացման ճանապարհին, էժան գնով վաճառելով իրենց բանուժը։ «Ռուսական գյուղը 1861—1880 թվականների բեկման ժամանակաշրջանում» մենագրության համար ակադ. Ն. Դրուժինինը արժանացավ լենինյան մրցանակի։

Ուրախալին ու զարմանալին այն է, որ կյանքի հարյուրամյակին մոտեցող գիտնականը, գործակցելով իր կյանքի ու աշխատանքի գործընկեր Ելենա Իոսաֆովնա Դրուժինինայի հետ, շարունակում է ստեղծագործական աշխատանքը։ Հատկապես ուշադրության և դրվատանքի արժանի է 1985 թ. դեկտեմբերին լույս ընծայված «Ընտիր երկերի» չորսհատորյակի առաջին գիրքը՝

«Հեղափոխական շարժումները Ռուսաստանում XIX դարում» վերնագրով, ո տեղ նոր խմբագրությամբ վերահրատարակված են «Դեկաբրիստ Նիկիտա Մո ռավյովը» (էջ 3—305), «Պ. Ի. Պեստելի որոնումների պատմությունը», «Զե. Նիշովի ընտանիքը և դեկաբրիստական շարժումը», «Ս. Պ. Տրուբեցկոյը ոլ ոլես հուշագիր», «Դեկաբրիստ Ի. Դ. Յակուշկինը և նրա Լանկաստերյան դպ ռոցը», «Ա. Հագստհաուզենը և ռուս հեղափոխական դեմոկրատները», «Նս. ռոդնայա վոլյա» կուսակցության գործադիր կոմիտեի անդամ Աննա Վասիլևն. Յակիմովան (Կորոգևան)»։ Հրատարակչությունում է Ն. Դրուժինինի «Ընտի երկերի» երկրորդ ժողովածուն՝ «Ռուսաստանի սոցիալ-տնտեսական պատմու թյունը» (40 տպագրական մամուլ)։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Դրուժինինի ինքնակենսագրա կան գիրքը («Պատմաբանի հուշեր և մտորումներ»), որն ունեցել է մի քանի հրատարակություն՝ ռուսերեն և օտար լեզուներով։ Այդ բազմաբովանդակ աշ խատությունը բացառիկ գիտական և ուսուցողական նշանակություն ունի հու մանիտար գիտություններով զբաղվող գիտնականների, առավել ևս երիտա սարդների համար։ Շնորհաշատ, համեստ և բազմափորձ Դրուժինինն իր գրքի վերջում գրում է. «Այս գրքույկը ես դիտում եմ որպես հրապարակային հաշ. վետվություն իմ գիտական գործունեության մասին։ Իմ խնդիրն էր իմ աշխա տանքային փորձը կիսել ոչ միայն պատմաբանների, այլև ընթերցողների ավե լի լայն շրջանակի հետ» (էջ 117)։

Նակայն պետք է ասել, որ այս գիրքը (167 էջ), որ հեղինակը «գրքույկ» է անվանել, մի ամբողջ պատմագիտական դպրոց է, մեթոդոլոգիական ու մե թոդական աշխատանքի կոնկրետ ուղեցույց, որում տրված է սովետական պատմագրության քառուղիների կոնկրետ պատկերը։ Յուրաքանչյուր գիտնա կան, տարեց թե երիտասարդ, այստեղ կգտնի մեծ հոգևոր սնունդ՝ ավելի լը ջախոհ քննելու համար իր գործն ու հետագա անելիքների ծրագիրը, հաշվի առնելով այն նշանակալի փորձը, որ շարադրված է հեղինակի 80 տարիների ընթացքում ստեղծած օրագրությունների հիման վրա։ Այդ մասին Ն. Դրուժի նինը գրել է. «Բարեբախտաբար ինձ մոտ պահպանված են համապատասխան նյութեր, որոնք կանխում են հիշողության հնարավոր սխալները՝ մտավոր աշ խատանքի ամենօրյա գրառումները, որ ես կատարում էի սկսած 1906 թվա կանից, ուսանողական և ասպիրանտական կոնսպեկտները, քաղվածքների սե վագրությունները և սեփական ուսումնասիրությունները» (էջ 3)։

Մարքս-լենինյան մեթոդոլոգիան միշտ ուղենիշ է եղել Ն. Դրուժինինի գի տական գործունեության ճանապարհին։ «Իսկական գիտական պատմական ուսումնասիրությունը,— գրել է նա,— կարող է արդյունք լինել ինքնուրույն տևական ու համառ աշխատանքի. ստուգված, համադրված և օրգանապես ի րար հետ կապված փաստերը և միայն փաստերը կարող են լայն ընդհանրա ցումների ամուր հիմք լինել... Պատմահետազոտողի տրամադրության տակ պետք է լինի ճշմարիտ չափանիշ... Պատմական ճանաչողության այդպիսի հզոր միջոց է մարքսիզմ-լենինիզմը, որն օգնում է անսահման փաստական նյութերի լաբիրինթոսում ճանապարհ գտնելուն» (էջ 108)։

Անուրանալի են ակադեմիկոսի խոշոր ծառայությունները կադրերի պատ րաստման գործում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ուսուցիչը մեծ չափա նիշի գիտնական է և համապատասխան մոտեցում ունի դեպի երիտասարդներն ու գործընկերները։ Հիշենք թեկուզ այն, որ հազարավոր պատմաբան ուսա նողներ ու ասպիրանտներ ոչ միայն կարդացել են նրա գրքերն ու հոդվածները, այլև լսել նրա դասախոսությունները, յուրացրել գիտական և դասախոսական աշխատանքի նրա մեթոդիկան։ Այդ մասին Դրուժինինը իր «Հուշերում» գրել է. «1) Դասախոսությունները պետք է բացահայտեն պատմական պրոցեսի օրինաչափ ընթացքը, դրա շարժիչ ուժերը, գլխավոր ուղղությունը և հիմնա կան փուլերը. 2) դրան համապատասխան, յուրաքանչյուր դասախոսություն պետք է ներառի խիստ ընտրված փաստական նյութեր՝ սիստեմավորված և գլխավոր ղեկավար մտքի հետ միասնականորեն ամրապնդված. 3) որպեսզի

լսարանի կողմից ընկալումը մատչելի լինի՝ դասախոսի շարադրանքը պետք է լինի ոչ միայն պարզ ու կուռ, այլև կենդանի, պատկերավոր» (էջ 52—53)։

Այսպիսի պահանջներ էր ներկայացնում ինքն իրեն դասախոսն ու գիտնականը, որը թևակոխել է իր բազմապտղ կյանքի երկրորդ հարյուրամյակը։ «Вопросы истории» ամսագրի 1985 թ. 12-րդ համարում պրոֆեսորներ Ս. Ս. Դմիտրիևը և Ա. Ս. Նիֆոնտովը նշել են, որ ականավոր սովետական պատմաբանի բացառիկ ստեղծագործական երկարակեցության պատճառները պետք է փնտրել, առաջին հերթին, նրա բարձր գիտական սկզբունքայնության և մշտական, նպատակասլաց, համաչափ աշխատանքի մեջ։

Այսպես է գործել ու աշխատել ակադեմիկոսը և հասել խոշոր հաջողությունների, որոնք բարձր են գնահատվել ու արժանացել համընդհանուր ճանաչման։ Ն. Մ. Դրուժինինը պարգևատրվել է Լենինի երեք շքանշաններով, Աշխատանքային Կարմիր դրոշի երկու, «Հոկտեմբերյան հեղափոխության», «Պատվո նշան» շքանշաններով, արժանացել է ՍՍՀՄ պետական և լենինյան մրցանակների։